Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Լիլիա Շուշանյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ղազախստանի Հանրապետություն, 2019թ. սեպտեմբերի 24-ից 26-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

ԱՊՀ միջկառավարական խորհուրդ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ԱՊՀ ընդերքի հետազոտման, օգտագործման և պահպանության միջկառավարական խորհրդի 23-րդ նիստին

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Նիստի ընթացքում քննարկվել են 2018-2019թթ. միջկառավարական խորհրդի կողմից իրականացված քայլերը, որոնց մասին տեղեկատվությունը գրավոր տեսքով պետք է ներկայացվի մինչև սույն թվականի հոկտեմբերի 3-ը: Խորհրդի նախագահությունը Բելառուսի ներայացուցչից (Անդրեյ Խմել, Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի նախարարի տեղակալ) փոխանցվել է Ղազախստանի ներկյացուցչին (Ակբատիր Նադիրբաև, Երկրաբանության կոմիտեի նախագահ): Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ նիստի ընթացքում հաստատել 2021-2025թթ. աշխատանքային պլանը՝ մինչ այդ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ:

Քննարկված հարցերի թվում էին օգտակար հանածոների պաշարների ազգային դասակարգման համակարգերի ներդաշնակեցումը ինչպես միմյանց, այնպես էլ ՄԱԿ-ի շրջանակային դասակարգման հետ:

Խորհրդի անդամների դիտարկմանը ներկայացվեց Պատանի երկրաբանների միջազգային օլիմպիադաների կանոնակարգը, և պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև տարվա վերջ լրմշակել այն ստացված առաջարկությունների հիման վրա: Ռուսական կողմը ներկայացրեց 2019թ. Նովոսիբիրսկում կազմակերպված Միջազգային երկրորդ օլիմպիադայի մասին ամփոփ տեղեկատվություն: Ընդունվեց ի գիտություն ղազախական կողմի տեղեկատվությունը Միջազգային երրորդ օլիմպիադան 2020թ. Նուր-Սուլթանում անցկացնելու վերաբերյալ:

Մասնակիցների կողմից քննարկվեց նաև Միջազգային երկրաբանական կոնգրեսի 36-րդ նիստի աշխատանքներին Խորհրդի մասնակցության հարցը, ինչպես նաև հավանության արժանացավ Ռուսաստանի կողմից 38-րդ նիստի անցկացման հայտադիմում կազմելու և ներայացնելու գաղափարը: Ներկայացվել են նաև ընդհանուր սահման ունեցող երկրների միջև իրականացված երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները (Ռուսաստան-Բելառուս, Ղազախստան-Ռուսաստան):

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Քննարկվեց Ուզբեկստանի՝ 1997 թվականի մարտի 27-ի Համաձայնագրին միանալու հարցը: Խորհրդի նիստի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության դրական դիրքորոշումը հարցի վերաբերյալ՝ նշելով, որ նիստի նախօրեին այն ներկայացված է եղել նաև պաշտոնական գրությամբ: Խորհուրդը լսելով Ղրղզական Հանրապետության՝ ընդհանուր առմամբ դրական մոտեցման մասին, որոշեց առաջարկել ղրղզական կողմին՝ հարցի ներպետական գործընթացներն արագացնելու և արդյունքների մասին Գործադիր կոմիտեին տեղեկացնելու մասին: Միաժամանակ, ընդունելով Ուզբեկստանի առաջարկը, որոշվեց Խորհրդի 14-րդ նիստն 2020 թվականին անցկացնել Ուզբեկստանում:

Օրակարգային հարցերի թվում էր նաև անդամ պետություններում երկրաբանական տվյալների բանկերի ստեղծման հարցը, որի ուղղությամբ կատարված աշխատանքների զեկույց ներկայացվեց: Հայաստանի անունից ներկայացրել եմ Հանրապետական երկրաբանական ֆոնդի ամբողջական թվայնացման մասին՝ շուրջ 12 հազար նյութ՝ իրենց քարտեզագրական և այլ փաթեթներով: Ցուցադրվել է թվայնացված նյութերի զետեղման համար ստեղծված կայքը, որոնման, կիրառման գործիքները: Հայկական կողմի կատարած աշխատանքը հետաքրքրություն առաջացրեց մասնակիցների շրջանակներում, ինչի շուրջ

լրացուցիչ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերվեց: Ի լրումն, որպես հայկական կողմի ներկայացուցիչ, բարձրացրել եմ Խորհրդի՝ որպես միջպետական հարթակի աշխատանքների կազմակերպման հարց: Մասնավորապես, դիրքորոշում եմ հայտնել բոլոր ծրագրերի և պլանավորվող քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը բոլոր անդամ պետություններին փոխանցելու մասին, անկախ նիստերին մասնակցելու կամ նիստերից բացակայելու փաստից՝ բոլոր կողմերից արձագանք և աշխատանքներում առավելագույն ներգրավվածություն ապահովելու նպատակով: Խորհուրդը և Գործադիր կոմիտեն ընդունեցին այսուհետ աշխատանքներն այդ ձևով կազմակերպելու առաջարկը, իսկ մասնավորապես Միասնական երկրաբանական ֆոնդի ստեղծման Ղազախստան-Ռուսաստան-Բելառուս աշխատանքային խմբում կառաջարկվի ներգրավվել նաև այլ անդամ պետությունների ներկայացուցիչներին:

Հայկական կողմի առաջարկով օրակարգում ներառված հարցի (CRIRSCO միջազգային ստանդարտին անդամակցության փորձը) զեկուցումից հետո, գործընկերների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել լրացուցիչ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Խորհրդի անդամների կողմից ստորագրվել է նիստի արձանագրությունը՝ յուրաքանչյուր երկրի համար առանձնացված օրինակով:

Լիլիա Շուշանյան

X _____

30.09.2019թ.